ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հունվարի 2024 թվականի № 20-Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տարածքային կառավարման մասին» օրենքի 13–րդ հոդվածի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Հրազդանի Վ. Սարոյանի անվան № 11 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2024 թվականի հունվարի 18-ից 23-ն ուսումնասիրություն իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.

1) ***Կարեն Հունանյան*** - աշխատանքային խմբի ղեկավար, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ,

2) ***Լեյլի Խաչատրյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ,

3) ***Հասմիկ Մակարյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի, կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ,

4) ***Մեղա Բաղդասարյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ,

5) ***Շավարշ Արփաչյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ավագ մասնագետ:

2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ ուսումնասիրության ավարտից հետո հնգօրյա ժամկետում ներկայացնել ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ համապատասխան տեղեկանք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

2024 թվականի հունվարի 16
ք. Հրազդան